ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ստորաբաժանման ղեկավար

ք. Երևան, Կոմիտասի 35/2
☎ + (37410) 32-43-24
Ֆաքս + (37410) 32-42-73

18/05/2013 No ԿԽ - 1/1813 .

Ձեր _____ առ _____

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի
հասարակական կազմակերպության
իրավաբան պարոն Գ.Հայրապետյանին
(ք.Երևան, Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ)

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե հասցեագրված Ձեր 07.05.2013թ. N 201-ի 2 գրության հայտնվում է հետևյալը:
«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի պահանջների համաձայն անշարժ գույքի միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման համար մատուցվող ծառայությունների համար պետական բյուջե գանձվում է վճար նույն օրենքով սահմանված չափերով՝ գանձապետարանում բացված համապատասխան հաշվին: Նույն հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն՝ դիմողները պարտավոր են վճարել օրենքով սահմանված վճարները, իսկ 32-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է տեղեկատվության տրամադրման դիմումին կից տեղեկատվության տրամադրման վճարի մուծման անդորրագիրը ներկայացնելու պահանջը:

Բացի այդ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանափակում է գույքային իրավունքների, դրանց ձեռքբերման կամ գրանցման հիմքերի վերաբերյալ տեղեկությունների մատչելիությունը՝ ամրագրելով որ նման տեղեկությունները (այդ թվում՝ փաստաթղթերի պատճենների կամ քաղվածքների ձևով), այդ իրավունքների իրավատերերից, գրանցված իրավունքի սուբյեկտներից և նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված մարմիններից բացի այլ անձանց կարող են տրամադրվել իրավատերերի կամ գրանցված իրավունքի սուբյեկտների համաձայնությամբ, իսկ գործարքների կամ դրանց առանձին պայմանների վերաբերյալ տեղեկությունները՝ այդ գործարքների կողմերի և նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված մարմիններից բացի այլ անձանց կարող են տրամադրվել տրամադրվել միայն գործարքի կողմերի համաձայնությամբ:

Ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ Երևան քաղաքի Մաշտոցի պողոտա 5 հասցեի շուկայի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վերաբերյալ տեղեկատվությունը, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված տեղեկությունների մատչելիության սահմանափակումների հաշվառմամբ, հնարավոր կլինի տրամադրել նույն օրենքի 74-րդ հոդվածով սահմանված չափով տեղեկատվության տրամադրման ծառայության վճարի մուծման անդորրագիր ներկայացվելու դեպքում:

Ստորաբաժանման ղեկավար՝ Կ. Խաչատուրյան

Կատարող՝
Լիանա Մարգարյան
32-42-38
0